տուել. այդ պարզ է թէ արձանագրութեան և թէ մեր լուսանկարի մէջ, որով c շեղագրի սկզբնաձևն է։ Փչացած է խ-ի բնորոշ գլխիկը. ա չի երևում։

Վեցերորդ տողի ն չի երևում. պար կոտրած է։

Եօթերորդ տող. s-ի վերին գլուխը միայն նկատելի. ն եղծուած է, փակագծի ի-ն կոտրած։

12. Արուճի Ս. Գրիգորի վերայ Վառամա որդի Գրիգորի արձանագրութիւնը ձախ դասի արևմտեան պատի արևելեան երեսին, 867 թուականից։

1. ՅԺԶ թուականին Հայոց յի
2. շխանութ՝ի Աշոտոյ եւ ի տերութ՝ի Սմբատայ
3. Հայոց ասպարապետի Բագրատունոյ եւ ի կաթողիկո
4. սութ՝ի Զաքարիայի եղեւ կռիւ ընդ Յարուճ եւ ընդ Կոշ եւ
5. ընդ գաւառն. եհար Արուճ զԿոշ եւ զգաւառն եւ կալաւ
6. զԿոշա վանականն եւ ի Քրիստվանին ընդ անկին մինթա
7. նի! վաճառեցին. ես Գրիգոր որդի Վառամա ծառա Ս
8. մբատա Բագրատունոյ եկի հրամանաւ Սմբատա եւ ես
9. հաւասարեցի զՋուրն ընդ Կոշ եւ ընդ Յարուճ զին
10. Չ իւրեանց ընիկ ռասմ էր լել։ Ա։ եւ կէս Կոշա եւ։ Ա։ Արճ
11. ո. արդ եթէ այլ ոք հակառակել ջանա այլ աւելի ռ
12. ասմ յուզէ։ ՅԺԸ։ սուրբ հայրապետացն նզել լիցի եւ
13. ի Սմբատա մահուամբ (բաց) պատուհասի,

Ուշադրութեան արժանի են երկրորդ և երրորդ տողերի մէջ թիւն վերջաւորութեան պատուով կամ կրճատ [գրութիւնները.] հնագոյնը հայ սղագրութեան մէջ, բացի «Ա՝ծ, Բ՝ս» բառերից։